ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԶԱՐԴ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

27.12.2018 թվականին Այգեզարդ գյուղական համայնքում տեղի ունեցավ հանրային լսում, որը նախագահում էր համայնքի ղեկավար Ա. Ավետիսյանը, քարտուղարում աշխատակազմի քարտուղար՝ Ս. Հովհաննիսյանը:

Մասնակցում էին ավագանու անդամները, համայնքապետարանի աշխատակազմը, համայնքի բնակիչները:

Լսեցին՝ Արարատի մարզի Այգեզարդ համայնքի ղեկավար Ա. Ավետիսյանի հաշվետվությունը 2018թ.-ի երկրորդ կիսամյակում կատարված աշխատանքների վերաբերյալ:

Արձանագրվեց, որ 2018թ.-ի երկրորդ կիսամյակի ընթացքում Այգեզարդ գյուղական համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Համայնքապետարանը բնակիչներից ստացել է 299 դիմում, կատարվել է բանավոր հարցումներ, որոնք քննարկվել են համայնքապետարանի աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ, տրվել են համապատասխան լուծումներ:

Կազմակերպվել է համայնքի ղեկավարի մոտ 22 ընդունելություն, ավագանու մոտ 2 ընդունելություն:

Համայնքապետարանը համայնքի բնակիչներին տվել է 113 տարբեր բնույթի տեղեկանքներ, միջնորդագրեր, բնութագրեր:

Ստացվել է նամակներ տարբեր կազմակերպություններից, որոնք ժամանակին քննարկվել և սահմանված ժամկետներում պատասխանվել են:

2018 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտները կազմել են՝

1. Հողի հարկ	17155,8 հազ. դրամ
2. Գույքահարկ	11133,1 հազ. դրամ
3. Տեղական տուրք	187,2 հազ. դրամ
4. Ոչ հարկային եկամուտ	3692,6 հազ. դրամ
5. Վարձակալական հողերի վարձավճար	1565,5 հազ. դրամ
6. Տեղվճար	4127,1 հազ. դրամ
7. Հողի օտարումից մուտքեր	720,0 հազ. դրամ
8. Այլ հիմնական միջոցների օտարումից մուտքեր	770,2 հազ. դրամ

2018 թվականի երկրորդ կիսամյակին

Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է 2995,0 հազ. դրամ ֆինանսական աջակցություն

Հարազատներին կորցրած անձանց ընտանիքներին 1200,0 հազ. դրամ

Վետերանների միությանը 10000 դրամ,
Երկրապահ կամավորական ընկերությանը 30000 դրամ
Դրամաշնորհներ հանրակրթական դպրոցին 200000 դրամ,
Բուժ. ամբուլատորիային 250000 դրամ
Հուլիս ամսին կատարվել է ճանապարհների հարթեցում և կոպճապատում,
Ազատի ջրանցքի ներքին և վերին հատվածների 3750,0 հազ. դրամ
Սեպտեմբերին կատարվել է դաշտամիջյան ճանապարհների կոպճապատում 920,0 հազ. դրամ
Արվեստի դպրոցի պատուհանների կապիտալ վերանորոգում 984,0 հազ. դրամ
Հոկտեմբեր ամսին կատարվել է մշակույթի տան ֆոյեյի կապիտալ վերանորոգում 905,0 հազ. դրամ
Նոյեմբեր ամսին կատարվել է այգու սան. հանգույցի կառուցում 940,0 հազ.դրամ
Ճանապարհների կոպճապատում 930,0 հազ. դրամ
Դեկտեմբերին կատարվել է բակային փողոցի արտաքին լուսավորության հիմնանորոգում 940,0 հազ. դրամ
Կատարվել է մարզադաշտի հարթեցում 310,0 հազ. դրամ:

Համայնքի հիմնախնդիրներն են Ա. Ղարիբյան փողոցի ասֆալտապատումը, մշակույթի տան վերանորոգումը, համայնքի մարզադաշտի հիմնանորոգումը, գյուղամիջյան այգու հիմնանորոգումը, համայնքի 5 փողոցների գազաֆիկացումը և արևային ֆոտովոլտային կայանների տեղադրումը:

ԱՅԳԵՁԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԶԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ